# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# Ա Պ Ա Ր Ա Ն  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 03 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 81-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով և հաշվի առնելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է.*

1. Ապարան համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 3-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

(զեկուցող՝ Ա.Կարապետյան)

2. Ապարան համայնքի 2023 թ բյուջեի ֆոնդային և վարչական մասերի ծախսային հոդվածներում ավելացումներ և պակասեցումներ կատարելու և Ապարան համայնքի ավագանու 20.12.2022 թ N 153-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

(զեկուցող՝ Ս. Շերիկյան)

3. ՀՀ Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի սոցիալական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, կանոնադրությունը և հաստիքացուցակը հաստատելու մասին

(զեկուցող՝ Ի. Թադևոսյան)

4. Ճապոնիայի դեսպանատան կողմից հայաստանի համայնքներին՝ «Մարդկային անվտանգության ծրագիր ժողովրդական մակարդակում» դրամաշնորհային մրցույթին դրական պատասխան ստացած Ապարանի համայնքապետարանի ծրագրին ընթացք տալու նպատակով արտաբյուջետային հաշիվ բացելու և տարեկան աշխատանքային պլանում ընդգրկելու մասին

(զեկուցող՝ Հ. Մկրտչյան)

5. Ապարանի համայնքի 2023թ հողային հաշվեկշիռը հաստատելու մասին

(զեկուցող՝ Ա. Դաղլարյան)

6. Ապարան համայնքի Ապարան քաղաքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման 0,002 հա հողամաս կառուցապատման իրավունքով առանց մրցույթի տրամադրելու թույլտվություն տալու մասին

(զեկուցող՝ Ա. Դաղլարյան)

7. Ապարան համայնքի Ապարան քաղաքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հասարակական կառուցապատման 0,00119 հա հողամաս կառուցապատման իրավունքով առանց մրցույթի տրամադրելու թույլտվություն տալու մասին

(զեկուցող՝ Ա. Դաղլարյան)

8. Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին

(զեկուցող՝ Ա. Դաղլարյան)

9. Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին

(զեկուցող՝ Ա. Դաղլարյան)

10. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Լուսագյուղ և Եղիպատրուշ վարչական տարածքներում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի գործառնական նշանակությունը փոխելուն հավանություն տալու մասին

(զեկուցող՝ Ա. Դաղլարյան)

11. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող հողամասի օտարելու թույլտվություն տալու մասին

(զեկուցող՝ Ա. Դաղլարյան)

Ավագանի՝ (կողմ-15) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Մակարյան Վահան
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Մխիթարյան Վարդան
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ
Դավթյան Արտյոմ
Կոստանյան Ժորա

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Գ.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

# ՈՐՈՇՈՒՄ

## 03 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 82-Ն

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 Թ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱԿԱՍԵՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.12.2022 Թ N 153-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջների, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-34-րդ հոդվածների դրույթներով, Ապարան համայնքի բյուջեում կատարել նախահաշվային փոփոխություններ:

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Ապարան համայնքի 2023 թ բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները՝
ա Ֆոնդային բյուջեի ծախսային մասում կատարել ավելացում 11.180,0հազ դրամ հետևյալ բնագավառներում՝

1. <Ընդհանուր բնույթի համայնքային ծախսեր > բնագավառի նախահաշվի 5134 հոդվածին 2.000,0 հազ. դրամով
   <Ընդհանուր բնույթի համայնքային ծախսեր > բնագավառի նախահաշվի 5129 հոդվածին 2.580,0 հազ. դրամով
2. Արտաքին լուսավորության ցանց բնագավառի նախահաշվի 5112 հոդվածին 1.500,0 հազ. դրամով
3. Ապարանի ջրամատակարարում և կոյուղի բնագավառի նախահաշվի 5112 հոդվածին 5.100,0 հազ. դրամով

բ Ֆոնդային բյուջեի ծախսային մասում պակասեցնել 11.180,0 հազ դրամ հետևյալ բնագավառներում՝

1. Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարման բնագավառի նախահաշվի 5122 հոդվածից 500,0 հազ. դրամով
2. <Ընդհանուր բնույթի համայնքային ծախսեր > բնագավառի նախահաշվի 5121 հոդվածից 7.380,0 հազ. դրամով
3. <Պաշտպանություն > բնագավառի նախահաշվի 5122 հոդվածից 3.300,0 հազ. դրամով:

գ Վարչական բյուջեի ծախսային մասում կատարել ավելացում 38.802,0հազ դրամ հետևյալ բնագավառներում՝

1. Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարման բնագավառի նախահաշվի 4111 հոդվածին 27.222,0 հազ. դրամով
2. Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարման բնագավառի նախահաշվի 4215 հոդվածին 100,0 հազ. դրամով
3. Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարման բնագավառի նախահաշվի 4222 հոդվածին 280,0 հազ. դրամով
4. Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարման բնագավառի նախահաշվի 4234 հոդվածին 300,0 հազ. դրամով
5. <Ընդհանուր բնույթի համայնքային ծախսեր > բնագավառի նախահաշվի 4241 հոդվածին 1.900,0 հազ. դրամով
6. <Ընդհանուր բնույթի համայնքային ծախսեր > բնագավառի նախահաշվի 4823 հոդվածին 1.000,0 հազ. դրամով
7. Արտաքին լուսավորության ցանց բնագավառի նախահաշվի 4212 հոդվածին 5.000,0 հազ. Դրամով

8. Վարդանանց ասպետների անվան մանկապարտեզ բնագավառի նախահաշվի 4637 հոդվածին 3.000.0 հազ. դրամով

դ Վարչական բյուջեի ծախսային մասում պակասեցնել 38.802,0 հազ դրամ հետևյալ բնագավառներում՝

1. Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարման բնագավառի նախահաշվի 4235 հոդվածից 640,0 հազ. դրամով
2. Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարման բնագավառի նախահաշվի 4252 հոդվածից 3.000,0 հազ. դրամով
3. Օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարման բնագավառի նախահաշվի 4267 հոդվածից 1.442,0 հազ. դրամով
4. <Ընդհանուր բնույթի համայնքային ծախսեր > բնագավառի նախահաշվի 4239 հոդվածից 2.000,0 հազ. դրամով
5. <Ընդհանուր բնույթի համայնքային ծախսեր> բնագավառի նախահաշվի 4251 հոդվածից 2.000,0 հազ. դրամով
6. <Ընդհանուր բնույթի համայնքային ծախսեր> բնագավառի նախահաշվի 4252 հոդվածից 5.000,0 հազ. դրամով
7. <Ընդհանուր բնույթի համայնքային ծախսեր> բնագավառի նախահաշվի 4264 հոդվածից 2.300,0 հազ. դրամով
8. <Ընդհանուր բնույթի համայնքային ծախսեր> բնագավառի նախահաշվի 4729 հոդվածից 3.800,0 հազ. դրամով
9. <Սոցիալական հատուկ արտոնություններ> բնագավառի նախահաշվի 4726 հոդվածից 1.000,0 հազ. դրամով
10. <Սոցիալական հատուկ արտոնություններ> բնագավառի նախահաշվի 4729 հոդվածից 3.000,0 հազ. դրամով
11. <Մշակույթային ծրագրեր> բնագավառի նախահաշվի 4267 հոդվածից 1.120,0 հազ. դրամով
12. Ապարանի ջրամատակարարում և կոյուղի բնագավառի նախահաշվի 4239 հոդվածից 1.500,0 հազ. դրամով
13. Ապարանի ջրամատակարարում և կոյուղի բնագավառի նախահաշվի 4269 հոդվածից 4.000,0 հազ. դրամով
14. Ապարանի ճանապարհային տրանսպորտ բնագավառի նախահաշվի 4252 հոդվածից 8.000,0 հազ. դրամով

2. <<Ապարան համայնքի 2023 թ. բյուջեն հաստատելու մասին>> Ապարան համայնքի ավագանու 20.12.2022 թվականի N 153-Ն որոշման 2-րդ, 3-րդ, 6-րդ կետերի աղյուսակներում կատարել Համապատասխան լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն N 1, 2, 3 հավելվածների:

Ավագանի՝ (կողմ-16) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Մակարյան Վահան
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Մխիթարյան Վարդան
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ
Դավթյան Արտյոմ
Ասատրյան Արամ
Կոստանյան Ժորա

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Գ.Կարապետյան

*Հավելված 1*
**Ապարան համայնքի ավագանու**
**03 օգոստոսի 2023թ. № 82-Ն որոշմամբ**

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023Թ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.12.2022 Թ N 153-Ն ՈՐՈՇՄԱՆ N2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7+ս.8) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող 2200 + տող 2300 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2700 + տող 2800 + տող 2900 + տող 3000 + տող 3100) | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2100 | 1 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (այլ դասերին չպատկանող) (տող 2110 + տող 2120 + տող 2130 + տող 2140 + տող 2150 + տող 2160 + տող 2170 + տող 2180) այդ թվում՝ | +7320.0 | +10620.0 | -3300.0 |
| 2110 | 1 | 1 | 0 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ որից՝ | +22320.0 | +22820.0 | -500.0 |
| 2111 | 1 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | +22320.0 | +22820.0 | -500.0 |
| 2160 | 1 | 6 | 0 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող), որից՝ | -15000.0 | -12200.0 | -2800.0 |
| 2161 | 1 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | -15000.0 | -12200.0 | -2800.0 |
| 2200 | 2 | 0 | 0 | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (այլ դասերին չպատկանող) (տող 2210+2220 + տող 2230 + տող 2240 + տող 2250), այդ թվում՝ | -3300.0 | 0.0 | -3300.0 |
| 2250 | 2 | 5 | 0 | Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝ | -3300.0 | 0.0 | -3300.0 |
| 2251 | 2 | 5 | 1 | Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | -3300.0 | 0.0 | -3300.0 |
| 2400 | 4 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 2410 + տող 2420 + տող 2430 + տող 2440 + տող 2450+տող 2460 + տող 2470 + տող 2480 + տող 2490), այդ թվում՝ | -8000.0 | -8000.0 | 0.0 |
| 2450 | 4 | 5 | 0 | Տրանսպորտ, որից՝ | -8000.0 | -8000.0 | 0.0 |
| 2451 | 4 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | -8000.0 | -8000.0 | 0.0 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2600 | 6 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող 3610 + տող 3620 + տող 3630 + տող 3640 + տող 3650 + տող 3660), այդ թվում` | +6100.0 | -500.0 | +6600.0 |
| 2630 | 6 | 3 | 0 | Ջրամատակարարում, որից` | -400.0 | -5500.0 | +5100.0 |
| 2631 | 6 | 3 | 1 | Ջրամատակարարում | -400.0 | -5500.0 | +5100.0 |
| 2640 | 6 | 4 | 0 | Փողոցների լուսավորում, որից` | +6500.0 | +5000.0 | +1500.0 |
| 2641 | 6 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | +6500.0 | +5000.0 | +1500.0 |
| 2800 | 8 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող 2810 + տող 2820 + տող 2830 + տող 2840+ տող 2850 + տող 2860), այդ թվում` | -1120.0 | -1120.0 | 0.0 |
| 2860 | 8 | 6 | 0 | Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող), որից` | -1120.0 | -1120.0 | 0.0 |
| 2861 | 8 | 6 | 1 | Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող) | -1120.0 | -1120.0 | 0.0 |
| 2900 | 9 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող 2910 + տող 2920 + տող 2930 + տող 2940+ տող 2950 + տող 2960 + տող 2970 + տող 2980), այդ թվում` | +3000.0 | +3000.0 | 0.0 |
| 2910 | 9 | 1 | 0 | Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն, որից` | +3000.0 | +3000.0 | 0.0 |
| 2911 | 9 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | +3000.0 | +3000.0 | 0.0 |
| 3000 | 10 | 0 | 0 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 3010 + տող 3020 + տող 3030 + տող 3040 + տող 3050+ տող 3060 + տող 3070 + տող 3080 + տող 3090), այդ թվում` | -4000.0 | -4000.0 | 0.0 |
| 3070 | 10 | 7 | 0 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) , որից` | -4000.0 | -4000.0 | 0.0 |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | -4000.0 | -4000.0 | 0.0 |

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Ի.Ա.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

*Հավելված 2*
**Ապարան համայնքի ավագանու**
**03 օգոստոսի 2023թ. № 82-Ն որոշմամբ**

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023Թ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.12.2022 Թ N 153-Ն ՈՐՈՇՄԱՆ N3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 4050 + տող 5000 + տող 6000) այդ թվում՝ | | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4050 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ՝ (տող 4100 + տող 4200 + տող 4300 + տող 4400 + տող 4500 + տող 4600 + տող 4700) այդ թվում՝ | x | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4100 | 1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող 4110 + տող 4120 + տող 4130) այդ թվում՝ | x | +27222.0 | 27222.0 | 0.0 |
| 4110 | ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ (տող 4111 + տող 4112 + տող 4114) որից՝ | x | +27222.0 | 27222.0 | x |
| 4111 | - Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | +27222.0 | 27222.0 | x |
| 4200 | 1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 4210 + տող 4220 + տող 4230 + տող 4240 + տող 4250 + տող 4260), այդ թվում՝ | x | -23422.0 | -23422.0 | x |
| 4210 | ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ (տող 4211 + տող 4212 + տող 4213 + տող 4214 + տող 4215 + տող 4216 + տող 4217), որից՝ | x | +5100.0 | +5100.0 | x |
| 4212 | - Էներգետիկ ծառայություններ | 4212 | +5000.0 | +5000.0 | x |
| 4215 | - Ապահովագրական ծախսեր | 4215 | +100.0 | +100.0 | x |
| 4220 | ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ (տող 4221 + տող 4222 + տող 4223), որից՝ | x | +280.0 | +280.0 | x |
| 4222 | - Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր | 4222 | +280.0 | +280.0 | x |
| 4230 | ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 4231 + տող 4232 + տող 4233 + տող 4234 + տող 4235 + տող 4236 + տող 4237 + տող 4238), որից՝ | x | -3840.0 | -3840.0 | x |
| 4234 | - Տեղակատվական ծառայություններ | 4234 | +300.0 | +300.0 | x |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4235 | - Կառավարչական ծառայություններ | 4235 | -640.0 | -640.0 | x |
| 4238 | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | -3500.0 | -3500.0 | x |
| 4240 | ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ (տող 4241), որից՝ | x | +1900.0 | +1900.0 | x |
| 4241 | - Մասնագիտական ծառայություններ | 4241 | +1900.0 | +1900.0 | x |
| 4250 | ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր) (տող 4251 + տող 4252), որից՝ | x | -18000.0 | -18000.0 | x |
| 4251 | - Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | -2000.0 | -2000.0 | x |
| 4252 | - Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | -16000.0 | -16000.0 | x |
| 4260 | ՆՅՈՒԹԵՐ (տող 4261 + տող 4262 + տող 4263 + տող 4264 + տող 4265 + տող 4266 + տող 4267 + տող 4268), որից՝ | x | -8862.0 | -8862.0 | x |
| 4264 | - Տրանսպորտային նյութեր | 4264 | -2300.0 | -2300.0 | x |
| 4267 | - Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | -2562.0 | -2562.0 | x |
| 4268 | - Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | -4000.0 | -4000.0 | x |
| 4500 | 1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 4510 + տող 4520 + տող 4530 + տող 4540), այդ թվում՝ | x | +3000.0 | +3000.0 | x |
| 4530 | ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ (տող 4531 + տող 4532 + տող 4533), որից՝ | x | +3000.0 | +3000.0 | x |
| 4531 | - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին | 4637 | +3000.0 | +3000.0 | x |
| 4600 | 1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ (տող 4610 + տող 4630 + տող 4640), այդ թվում՝ | x | -7800.0 | -7800.0 | x |
| 4630 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ) (տող 4631 + տող 4632 + տող 4633 + տող 4634), որից՝ | x | -7800.0 | -7800.0 | x |
| 4631 | - Հուղարկավորության նպաստներ բյուջեից | 4726 | -1000.0 | -1000.0 | x |
| 4634 | - Այլ նպաստներ բյուջեից | 4729 | -6800.0 | -6800.0 | x |
| 4700 | 1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ (տող 4710 + տող 4720 + տող 4730 + տող 4740 + տող 4750 + տող 4760 + տող 4770), այդ թվում՝ | x | +1000.0 | +1000.0 | x |
| 4720 | ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ | x | +1000.0 | +1000.0 | x |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ (տող 4721 + տող 4722 + տող 4723 + տող 4724), որից` | | | | |
| 4723 | - Պարտադիր վճարներ | 4823 | +1000.0 | +1000.0 | x |
| 5000 | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ (տող 5100 + տող 5200 + տող 5300 + տող 5400), այդ թվում` | x | 0.0 | x | 0.0 |
| 5100 | 1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5110 + տող 5120 + տող 5130), այդ թվում` | x | 0.0 | x | 0.0 |
| 5110 | ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 5111 + տող 5112 + տող 5113), որից` | x | +6600.0 | x | +6600.0 |
| 5112 | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | +6600.0 | x | +6600.0 |
| 5120 | ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ (տող 5121 + տող 5122 + տող 5123), որից` | x | -8600.0 | x | -8600.0 |
| 5121 | - Տրանսպորտային սարքավորումներ | 5121 | -7380.0 | x | -7380.0 |
| 5122 | - Վարչական սարքավորումներ | 5122 | -3800.0 | x | -3800.0 |
| 5123 | - Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | +2580.0 | x | +2580.0 |
| 5130 | ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5131 + տող 5132 + տող 5133 + տող 5134), որից` | x | +2000.0 | x | +2000.0 |
| 5134 | - Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | +2000.0 | x | +2000.0 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ի.Ա.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

*05028552*

*Հավելված 3*
**Ապարան համայնքի ավագանու**
**03 օգոստոսի 2023թ. № 82-Ն որոշմամբ**

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 Թ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 20.12.2022 Թ N 153-Ն ՈՐՈՇՄԱՆ N4 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Տնտեսա-գիտական դասակարգ-ման հոդված | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող 2200 + տող 2300 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2700 + տող 2800 + տող 2900 + տող 3000 + տող 3100) | | 0.0 | 0.0 | 0.0 |
| 2100 | 1 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (այլ դասերին չպատկանող) (տող 2110 + տող 2120 + տող 2130 + տող 2140 + տող 2150 + տող 2160 + տող 2170 + տող 2180) այդ թվում՝ | | +7320.0 | +10620.0 | -3300.0 |
| 2110 | 1 | 1 | 0 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ որից՝ | | +22320.0 | +22820.0 | -500.0 |
| 2111 | 1 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | | +22320.0 | +22820.0 | -500.0 |
| | | | | - Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | +27222.0 | +27222.0 | 0.0 |
| | | | | - Ապահովագրական ծախսեր | 4215 | +100.0 | +100.0 | 0.0 |
| | | | | - Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր | 4222 | +280.0 | +280.0 | 0.0 |
| | | | | - Տեղակատվական ծառայություններ | 4234 | +300.0 | +300.0 | 0.0 |
| | | | | - Կառավարչական ծառայություններ | 4235 | -640.0 | -640.0 | 0.0 |
| | | | | - Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | -3000.0 | -3000.0 | 0.0 |
| | | | | - Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | -1442.0 | -1442.0 | 0.0 |
| | | | | - Վարչական սարքավորումներ | 5122 | -500.0 | 0.0 | -500.0 |
| 2160 | 1 | 6 | 0 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին | | -15000.0 | -12.200 | -2800.0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | չպատկանող), որից՝ | | | | |
| 2161 | 1 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | | -15000.0 | -12.200 | -2800.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | -2000.0 | -2000.0 | 0.0 |
| | | | | - Մասնագիտական ծառայություններ | 4241 | +1900.0 | +1900.0 | 0.0 |
| | | | | - Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | -2000.0 | -2000.0 | 0.0 |
| | | | | - Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | -5000.0 | -5000.0 | 0.0 |
| | | | | - Տրանսպորտային նյութեր | 4264 | -2300.0 | -2300.0 | 0.0 |
| | | | | - Այլ նպաստներ բյուջեից | 4729 | -3800.0 | -3800.0 | 0.0 |
| | | | | - Պարտադիր վճարներ | 4823 | +1000.0 | +1000.0 | 0.0 |
| | | | | - Տրանսպորտային սարքավորումներ | 5121 | -7380.0 | 0.0 | -7380.0 |
| | | | | - Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | +2580.0 | 0.0 | +2580.0 |
| | | | | - Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | +2000.0 | 0.0 | +2000.0 |
| 2200 | 2 | 0 | 0 | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (այլ դասերին չպատկանող) (տող 2210+2220 + տող 2230 + տող 2240 + տող 2250), այդ թվում՝ | | -3300.0 | 0.0 | -3300.0 |
| 2250 | 2 | 5 | 0 | Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող), որից՝ | | -3300.0 | 0.0 | -3300.0 |
| 2251 | 2 | 5 | 1 | Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | | -3300.0 | 0.0 | -3300.0 |
| | | | | - Վարչական սարքավորումներ | 5122 | -3300.0 | 0.0 | -3300.0 |
| 2400 | 4 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 2410 + տող 2420 + տող 2430 + տող 2440 + տող 2450+տող 2460 + տող 2470 + տող 2480 + տող 2490), այդ թվում՝ | | -8000.0 | 8000.0 | 0.0 |
| 2450 | 4 | 5 | 0 | Տրանսպորտ, որից՝ | | -8000.0 | 8000.0 | 0.0 |
| 2451 | 4 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | | -8000.0 | 8000.0 | 0.0 |
| | | | | - Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | -8000.0 | 8000.0 | 0.0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2600 | 6 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող 3610 + տող 3620 + տող 3630 + տող 3640 + տող 3650 + տող 3660), այդ թվում՝ | | +6100.0 | -500.0 | +6600 |
| 2630 | 6 | 3 | 0 | Ջրամատակարարում, որից՝ | | -400.0 | -5500.0 | +5100.0 |
| 2631 | 6 | 3 | 1 | Ջրամատակարարում | | -400.0 | -5500.0 | +5100.0 |
| | | | | - Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | -1500.0 | -1500.0 | 0.0 |
| | | | | - Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | -4000.0 | -4000.0 | 0.0 |
| | | | | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | +5100.0 | 0.0 | +5100.0 |
| 2640 | 6 | 4 | 0 | Փողոցների լուսավորում, որից՝ | | +6500.0 | +5000.0 | +1500.0 |
| 2641 | 6 | 4 | 1 | Փողոցների լուսավորում | | +6500.0 | +5000.0 | +1500.0 |
| | | | | - Էներգետիկ ծառայություններ | 4212 | +5000.0 | +5000.0 | 0.0 |
| | | | | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | +1500.0 | 0.0 | +1500.0 |
| 2800 | 8 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող 2810 + տող 2820 + տող 2830 + տող 2840+ տող 2850 + տող 2860), այդ թվում՝ | | -1120.0 | -1120.0 | 0.0 |
| 2860 | 8 | 6 | 0 | Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող), որից՝ | | -1120.0 | -1120.0 | 0.0 |
| 2861 | 8 | 6 | 1 | Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող) | | -1120.0 | -1120.0 | 0.0 |
| | | | | - Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | -1120.0 | -1120.0 | 0.0 |
| 2900 | 9 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող 2910 + տող 2920 + տող 2930 + տող 2940+ տող 2950 + տող 2960 + տող 2970 + տող 2980), այդ թվում՝ | | +3000.0 | +3000.0 | 0.0 |
| 2910 | 9 | 1 | 0 | Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն, որից՝ | | +3000.0 | +3000.0 | 0.0 |
| 2911 | 9 | 1 | 1 | Նախադպրոցական կրթություն | | +3000.0 | +3000.0 | 0.0 |
| | | | | - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին | 4637 | +3000.0 | +3000.0 | 0.0 |
| 3000 | 10 | 0 | 0 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 3010 + տող 3020 + տող 3030 + տող 3040 + տող 3050+ տող 3060 + տող 3070 + տող 3080 + տող 3090), այդ թվում՝ | | -4000.0 | -4000.0 | 0.0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3070 | 10 | 7 | 0 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) , որից՝ | | -4000.0 | -4000.0 | 0.0 |
| 3071 | 10 | 7 | 1 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | | -4000.0 | -4000.0 | 0.0 |
| | | | | - Հուղարկավորության նպաստներ բյուջեից | 4726 | -1000.0 | -1000.0 | 0.0 |
| | | | | - Այլ նպաստներ բյուջեից | 4729 | -3000.0 | -3000.0 | 0.0 |

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝** **Ի.Ա.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

# ՈՐՈՇՈՒՄ

## 03 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 83-Ա

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ 1-ին մասի 15-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի, 10-րդ, 11-րդ հոդվածների դրույթներով.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է՝*

1.Ստեղծել՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի սոցիալական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2. Ընդունել ի գիտություն, որ ՀՈԱԿ-ի գործունեությունը սկսվում է 2023 թ հոկտեմբերի 2-ից:

3.Հաստատել «ՀՀ Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի սոցիալական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի:

4. Հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի սոցիալական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը, համաձայն հավելված 2-ի:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

6. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ավագանի՝ (կողմ-16) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Մակարյան Վահան
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Մխիթարյան Վարդան
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ
Դավթյան Արտյոմ
Ասատրյան Արամ
Կոստանյան Ժորա

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Գ.Կարապետյան

Հավելված 1

Ապարան համայնքի ավագանու
03 օգոստոսի 2023թ. № 83- Ա որոշմամբ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի սոցիալական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որը իրականացնում է սոցիալ-տնտեսական, հոգեբանական, կրթական, սոցիալական պաշտպանության աջակցության ծրագրեր և (կամ) ծառայություններ:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին», <<Սոցիալական աջակցության մասին>> և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ կանոնադրություն):

3. Հաստատության գտնվելու վայրն է ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Ապարան, Բաղրամյան 26/1:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Ապարան համայնքի սոցիալական կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

2) հայերեն կրճատ՝ «Ապարան համայնքի սոցիալական կենտրոն» ՀՈԱԿ

3) ռուսերեն լրիվ՝ «Общественная некоммерческая организация "Апаранский общинный социальный центр" Арагацотнского марза, РА».

4) ռուսերեն կրճատ՝ ОНО "Апаранский общинный социальный центр"

5) անգլերեն լրիվ՝ «Community non-commercial organization "The social center of Aparan community" of Aragatsotn pmarz, RA».

6) անգլերեն կրճատ ՝ "The social center of Aparan community" NPO

7. Հաստատությունը կարող է ունենալ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և այլ անհատականացման միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել այլ լեզուներ:

8. Հաստատությունն ունի պաշտոնական կայք /կամ հիմնադրի կայքում/, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի) հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

9. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

10. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

11. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան կարող է համագործակցել օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների հետ:

12. Հաստատությունում չի թույլատրվում իրականացնել քաղաքական գործունեություն կամ քարոզչություն: Կրոնական գործունեությունը և քարոզչությունն արգելվում են՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

## 2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

13. Հաստատության գործունեության առարկան և նպատակը կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների, ինչպես նաև առավել խոցելի խմբերի սոցիալ-տնտեսական, հոգեբանական, կրթական, իրավական, սոցիալական պաշտպանության աջակցության ծրագրերի (այսուհետ՝ Ծրագրերի ) իրականացումն է:

14. Համայնքային բյուջեի հաստատման շրջանակներում ՀՈԱԿ-ի գործունեության համար հատկացնել անհրաժեշտ ծախսերը:

15.ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի կողմից ՀՈԱԿ-ի վերջնական հաստիքացուցակի կազմում:

16. Հաստատությունը հետապնդում է սոցիալ-տնտեսական, բարեգործական, մշակութային, կրթական և այլ հանրօգուտ նպատակներ:

17. Հաստատության գործունեության նպատակն է՝

17.1.ձևայնացված և ոչ ձևայնացված հարաբերությունների համակարգում

17.2. համայնքում սոցիալական տարաբնույթ ռիսկերի և դրանց ազդեցությամբ առաջացող հիմնախնդիրների բացահայտում և կանխարգելում

17.3. առանձին խմբերի շահերի ներկայացում, իրավունքների պաշտպանություն

17.4 սոցիալական և կրթական ծառայությունների մատուցում

18.Հաստատության գործունեության նպատակն է նաև համագործակցել պետական լիազոր մարմինների հետ և նպաստել համայնքի մինչև 18 տարեկան երեխաների առողջ և ապահով զարգացմանը, ինչպես նաև համայնքի առավել խոցելի բնակիչների բարեկեցությանը՝ իրավունքները պաշտպանելու, ընտանիքներն ուժեղացնելու, համայնքային ռեսուրսները համախմբելու միջոցով:

19.Հաստատությունը համագործակցում է համայնքի սոցիալական, կրթական, տնտեսական հիմնախնդիրների լուծման իրավասություն ունեցող պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների հետ՝ հայտնաբերելու կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին:

20. Հաստատությունը համագործակցում է միջազգային կազմակերպությունների, ՀՀ պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ, իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա իրականացնում է երկկողմանի ու բազմակողմանի կապեր այդ կազմակերպությունների, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ՝ կանոնադրությամբ նախատեսված գործունեությունն ապահովելու համար:

21. Հաստատության կրթական ծրագրերի ապահովման միջոցառումներում և ծառայություններում որպես անբաժանելի մաս կարող են ներառվել՝

1) հաստատության կողմից իրականացվող ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) շահառուների խնամքի, առողջության և անվտանգության պահպանման միջոցառումները՝ պահպանելով առողջապահության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած նորմերը.

19. Հաստատությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ կրթական, մարզաառողջարարական, ճամբարներում կազմակերպվող վճարովի ծառայություններ.

2) ստեղծել ռեսուրս-կենտրոններ՝ իրականացնել մասնագետների վերապատրաստման, խորհրդատվական դասընթացներ, վարել ծնողական կրթությանը միտված դասընթացներ և ծրագրեր.

3) կազմակերպել երեխայի տնային ուսուցում, դաստիարակություն և խնամք.

4) կազմակերպել ճկուն ռեժիմով երեխային սպասարկելու ծառայություններ.

5) կազմակերպել սաների երկարօրյա կամ շուրջօրյա ուսուցում և խնամք:

## 3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

22. Հաստատությունում գործունեությունը կազմակերպվում է պետական կառավարման լիազորված մարմինների կողմից երաշխավորված ծրագրերին (այդ թվում՝ այլընտրանքային, փորձարարական) համապատասխան:

23. Ծրագրով սահմանված մակարդակը ապահովվում է բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր անձի առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

24. Թույլատրվում է հաստատության կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև շահառուների ազատ հաճախումը հաստատություն:

## 4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

25. Հաստատության սոցիալ-տնտեսական, հոգեբանական, կրթական գործընթացի մասնակիցներն են՝

1) հաստատության ծառայություններից օգտվողը /երեխան/.

2) ծնողը (երեխայի օրինական ներկայացուցիչը).

3) տնօրենը, լոգոպեդը, հոգեբանը, սոցիալական մանկավարժը և այլ մասնագետներ:

26. Հաստատության ծառայություններից օգտվողներին հաստատության տնօրինությունը պարտավոր է ծանոթացնել կանոնադրությանը և այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

27. Հաստատության և հաստատություն հաճախող մինչև 18 տարեկան երեխաների ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

28. Հաստատության աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, շահառու/ մասնակցի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

29. Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է պետական կառավարման լիազորված մարմինների սահմանած տարիֆաորակավորման բնութագրերին:

30. Հաստատության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատաժամանակի տևողությունը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

## 5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

31. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը (պետական և համայնքային հաստատությունների դեպքում), գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

32. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

33. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) հաստատության հիմնադրումը.

2) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող գույքի կազմի հաստատումը.

3) հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

4) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

5) հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.

6) հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

34. Հիմնադիրը՝

1) իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) սահմանում է հաստատության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

5) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

6) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

7) հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

8) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

9) իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

35. Հաստատությունում գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ համայնքի, հոգաբարձուների, ծնողական և այլ խորհուրդներ:

36. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված այլ լիազորությունների սահմաններում, ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

37. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) նախագահում է հաստատության հոգաբարձուների խորհրդի նիստերը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

4) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

5) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7)օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

8) համաձայն պաշտոնների անվանացանկի և պաշտոնի նկարագրի՝ անցկացնում է մասնագետների այդ թվում նաև մանկավարժների թափուր տեղի համար մրցույթը, այլ կադրերի ընտրությունը, կնքում և լուծում է աշխատանքային պայմանագրերը, բաշխում աշխատանքը.

9) վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

10) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

11) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադրի հաստատմանը.

12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

38. Մասնագետները՝

1) ապահովում և իրականացնում են կանոնադրությամբ հաստատված ծրագրերի կատարումը՝ իրենց լիազորությունների շրջանակում՝ օրենքով հաստատված կարգով:
2) պատասխանատու են ծրագրերի կատարման աշխատանքների որոկի և արդյունքի համար:

## 6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

39. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

40. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության (վարձակալության) իրավունքով իրեն պատկանող գույքը:

41. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

42. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:

43. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

44. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:

45. Հաստատությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու:

46. Համայնքային սեփականություն համարվող հաստատությունների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ կառավարության որոշմամբ:

47. Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չի հիմնադրի, ավագանու որոշմամբ և սույն կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

48. Համայնքային հաստատության գույքի վարձակալումից ստացված եկամուտը հանդիսանում է հաստատության սեփականությունը և կարող է օգտագործվել միայն կանոնադրական գործառույթների իրականացման համար:

49. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է հիմնադիրը:

50. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

51. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են հիմնադրի հատկացումներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

52. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

2) բարեգործական, նպատակային ներդրումները, վարձավճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

53. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

54. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

55. Հաստատության լուծարման դեպքում հաստատության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի բյուջե:

Հավելված N 2
Ապարան համայնքի ավագանու
03.08.2023թ. N83-Ա որոշման

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ 2023 Թ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| Հ/Հ | Հաստիքի անվանումը | Թվա-քան ակ | Հաստի-քային միավոր | Դրույքա-չափ | Հաստիքա-վճար | ԸՆԴԱՄԵՆԸ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | **Տնօրեն** | **1** | **1** | **160.000** | **160.000** | **160.000** |
| 2 | **Հաշվապահ-տնտեսվար** | **1** | **1** | **140.000** | **140.000** | **140.000** |
| 3 | **Սոցիալական աշխատող** | **3** | **3** | **110.000** | **110.000** | **110.000** |
| 4 | **Հոգեբան** | **1** | **1** | **120.000** | **120.000** | **120.000** |
| 5 | **Լոգոպեդ** | **1** | **1** | **120.000** | **120.000** | **120.000** |
| 6 | **Տեխնիկական աշխատող** | **1** | **0.75** | **104.000** | **78.000** | **78.000** |
| | **Ընդամենը՝** | **8** | **7,25** | | | **668.000** |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ի.Ա.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

# ՈՐՈՇՈՒՄ

**03 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 84-Ա**

**ՃԱՊՈՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ՝ «ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ ՍՏԱՑԱԾ ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԾՐԱԳՐԻՆ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով Ապարան համայնքի կողմից ներկայացված և դրական պատասխան ստացած «Ապարան համայնքի Քուչակի, Շենավանի, Արագածի ամբուլատորիաների վերանորոգման մասին» դրամաշնորհային ծրագրային պահանջները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 92-րդ հոդվածի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1.2. հոդվածի 11-րդ, 15-րդ մասերի և 16-րդ մասի «ա» ենթակետի պահանջներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է

1. Համաձայնություն տալ համայնքապետարանի արտաբյուջետային հաշիվ բացելու առաջարկին:
2. Դիմել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ միջնորդելու ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ նախարարության գործառնական վարչությունում Ապարանի համայնքապետարանի արտաբյուջետային հաշիվ բացելու համար:
3. Ապարան համայնքի 2023թ. տարեկան աշխատանքային պլանում /ՏԱՊ/ կատարել փոփոխություն՝ ներառելով «Ապարան համայնքի Քուչակի, Շենավանի, Արագածի ամբուլատորիաների վերանորոգման մասին» ծրագիրը համաձայն հավելված 1-ի :

Ավագանի՝ (կողմ-16) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Մակարյան Վահան
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Մխիթարյան Վարդան
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ
Դավթյան Արտյոմ
Ասատրյան Արամ
Կոստանյան Ժորա

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Գ.Կարապետյան

**Հավելված 1**
**Ապարան համայնքի ավագանու**
**03.08.2023թ. №84-Ա որոշման**

**Ապարան համայնքի Արագած, Քուչակ և Շենավան բնակավայրերի բժշկական ամբուլատորիաների վերանորոգման համառոտ նկարագրություն**

Ապարան խոշորացված համայնքը գտնվում է բարձրլեռնային գոտում և ունի 22 վարչական տարածք ՝ 25 000 բնակչությամբ, որից 13 000-ը այս ծրագրի շահառու են:. Համայնքն ունի 1 բժշկական կենտրոն և 3 ամբուլատորիա: Ամբուլատորիաները բաց են երկուշաբթիից շաբաթ օրերին և գործում են օրական 8 ժամ: Ամբուլատորիաները տրամադրում են մանկաբուժական, թերապևտիկ, ատամնաբուժական ծառայություններ, լաբորատոր-ախտորոշիչ հետազոտություններ և իրականացնում են բոլոր անհրաժեշտ պատվաստումները: Բոլոր ծառայություններն անվճար են, ամբուլատորիաները գտնվում են վատ պայմաններում, ինչն ուղղակիորեն ազդում է մարդկանց կյանքի որակի և առողջության, ինչպես նաև առողջության առաջնային պահպանման ծառայությունների մատուցման վրա:

Ամբուլատորիաները ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից, սակայն վերահսկողությունն իրականացնում է համայնքը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը առողջության առաջնային պահպանման զարգացումը դիտարկում է որպես առողջապահական համակարգի բարեփոխումների հիմք, քանի որ այն բնակչությանը ցուցաբերվող բժշկական օգնության հիմնական օղակն է և ազգային առողջապահական համակարգի զարգացման ու բարեփոխման ամենաօպտիմալ միջոցը:

Ամբուլատորիաների ներկա վիճակի պատկերը հետևյալն է.

Արագած վարչական տարածքի ամբուլատորիան սպասարկում է 4 վարչական տարածք ՝ Արագած, Ծաղկաշեն, Վարդենուտ, Արայ: Սպասարկվող բնակչության թիվը կազմում է մոտ 6000 մարդ : Աշխատակիցների թիվը կազմում է 16 մարդ: Այստեղ ամսական այցելությունների թիվը մոտ 450-470 է : Այժմ շենքը գտնվում է վթարային վիճակում, պատուհաններն ու դռները ջարդված ու մաշված են, տանիքը կոտրված է և կաթում է տեղումների ժամանակ: Արագածի ամբուլատորիան կառուցվել է 1968 թվականին, վերջին վերակառուցումն իրականացվել է 2000-2002 թվականներին, և այժմ այն նույնիսկ գազաֆիկացված չէ: Ամբուլատոր ծառայությունների բարելավման, սանիտարահիգիենիկ պայմանների պահպանման և շինարարական պայմանների բարելավման նպատակով ծրագրի շրջանակներում նախատեսվում է վերանորոգել 440 քմ/17 սենյակ/ մակերեսով շենքը, վերանորոգել տանիքը, որպեսզի էներգիայի արտահոսք չլինի, անհրաժեշտ է ջերմամեկուսացում իրականացնել ՝ փոխարինել դռներն ու պատուհանները ՝ կարևորելով կանաչ էներգետիկ բաղադրիչը և արևային ֆոտովոլտային կայանքների /5 կՎտ/ տեղադրման անհրաժեշտությունը ՝ փորձելով խնայել ամբուլատորիայի ծախսերը: Ամբուլատորիայի տարածքը նախատեսվում է ասֆալտապատել, քանի որ այն գտնվում է ավերված վիճակում և տեղաշարժման դժվարություններ է առաջացնում: Տարածքը գազաֆիկացված չէ, տաք ջուր չկա և ջեռուցվում է էլեկտրականությամբ, որը զգալի քանակ է կազմում և առաջացնում են անհարմարություններ: Արևային կայանի արտադրած էներգիան կօգտագործվի միայն ամբուլատորիայի կարիքների համար: Արևային կայանի տեղադրման շնորհիվ մենք կարող ենք շատ միջոցներ խնայել :

Քուչակ վարչական տարածքի ամբուլատորիան սպասարկում է 3 վարչական տարածք՝ Քուչակ, Եղիպատրուշ, Ջրամբար: Սպասարկվող բնակչության թիվը կազմում է 2700 մարդ: Այստեղ ամսական այցելությունների թիվը հասնում է 350-ի : Աշխատակիցների թիվը կազմում է 9 մարդ: Ամբուլատորիան կառուցվել է 2009 թվականին և շենքը մասնակի վերանորոգվել է, բայց գազաֆիկացում չկա, պատուհանների վրա ճաղավանդակներ չկան, ինչի հետևանքով մի քանի անգամ գողություններ են կատարվել, բոլոր անհրաժեշտ տարածքներում ջրագիծ չկա:

Ջեռուցման բացակայության պատճառով հիվանդների խնամքն իրականացվում է մեկ հիվանդասենյակում, ինչը մեծ խնդիր է բժիշկների և հիվանդների համար: Շենքի ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 192 քմ: Նախատեսվում է իրականացնել 14 սենյակի կոսմետիկ վերանորոգում, ձեռք բերել ջրատաքացուցիչ, պատուհանների ճաղավանդակներ և գազաֆիկացնել:

Շենավան վարչական տարածքի ամբուլատորիան սպասարկում է 5 վարչական շրջան՝ Շենավան, Ափնա, Հարթավան, Երնջատափ, Շողակն: Սպասարկվող բնակչության թիվը կազմում է մոտ 4200 մարդ: Այստեղ ամսական այցելությունների թիվը հասնում է 250-ի:

Աշխատակիցների թիվը կազմում է 13 մարդ: Ամբուլատորիան կառուցվել է 2005 թվականին և այլևս չի վերանորոգվել: Շենավանի ամբուլատորիայում անհրաժեշտ է վերանորոգել 8 աշխատասենյակ/97 քմ/:

Բժշկական ամբուլատորիաները ենթակա են համայնքին, և դրանց պահպանման ծախսերը հոգում են համայնքի բյուջեից, իսկ աշխատողների աշխատավարձը և կոմունալ ծախսերը ՝ պետական բյուջեից:

***Ծրագիրը բաղկացած է 2 հիմնական բաղադրիչներից՝***

1. Էներգախնայողություն և էներգաարդյունավետություն. վերականգնվող էներգետիկայի համակարգերի ներդրում, ինչը կհանգեցնի արտանետումների կրճատման և շենքի ջերմամեկուսացմանը (դռների և պատուհանների փոխարինում)

2. Բարելավել շենքի վիճակը, ստեղծել հարմարավետ պայմաններ, որոնք ուղղակիորեն կանդրադառնան մատուցվող ծառայությունների որակի բարելավման վրա:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել համայնքի կողմից օրենքով սահմանված կարգով իրականացվելիք հետևյալ միջոցառումները, միջոցառումները նախատեսվում է իրականացնել 1 տարվա ընթացքում:

. Քուչակի և Շենավանի ամբուլատորիաներում շենքի ներքին պատերի վերանորոգում և ներկում

. Շենավանի և Քուչակի ամբուլատորիաներում թեքահարթակների վերանորոգում

. Քուչակի ամբուլատորիայում աստիճանների վերանորոգում և պատուհանների վրա բազրիքների տեղադրում

. Քուչակի ամբուլատորիայում ջեռուցման, կոյուղու և ջրամատակարարման համակարգերի վերանորոգում

. Տանիքի կառուցում Արագածի ամբուլատորիայում

. Պատուհանների և դռների տեղադրում Արագածի ամբուլատորիայում

. Արագածի ամբուլատորիայում պատերի և առաստաղի վերանորոգում

. Արագածի ամբուլատորիայում գազամատակարարման, կոյուղու և ջեռուցման համակարգերի կառուցում

. Արտաքին լուսավորություն Արագածի ամբուլատորիայում

Բնակչության հիգիենիկ և համաճարակաբանական անվտանգության ապահովումը պետական կարևորագույն խնդիրներից է և երաշխավորվում է «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

Ամբուլատորիայի վերանորոգման նպատակն է ապահովել յուրաքանչյուր հիվանդի անվտանգ, ժամանակակից բժշկական օգնությունը՝ կարևորելով առողջապահության նախարարության Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված որակը, մատչելիությունը և սանիտարական այլ սկզբունքները:

Ծրագրի նպատակներն են ապահովել բարձրորակ ախտորոշում, կանխարգելում և բժշկական սպասարկում հնարավորինս բարձր մակարդակով: Ծրագրի անմիջական շահառուներն են Ապարան համայնքի բնակիչները, ովքեր կկարողանան ստանալ ճիշտ ախտորոշում և բուժում, ինչպես նաև ամբուլատոր կլինիկաների աշխատակիցները, ովքեր կաշխատեն լավ պայմաններում

Նախագծի իրականացումը ենթադրում է հիմնական խնդիրների լուծում՝ անբավարար սանիտարահիգիենիկ պայմաններ, բարձր էներգասպառումներ, շինարարության անբարենպաստ պայմաններ, ինչն ազդում է ծառայությունների որակի վրա, ջեռուցման համակարգի բացակայություն:

***Ծրագրի արդյունքներն են*** '

* Բնակչության կյանքի որակի բարելավում

* Բնակիչների անվտանգության ապահովում

* Հիմնական կարիքների բավարարում և ֆինանսական խնայողություն

* Ջեռուցվող և հարմարավետ բժշկական ամբուլատորիաներ

* Վերանորոգված և նոր սարքավորումներով հագեցած բժշկական ամբուլատորիաներ

* Առողջապահական ծառայությունների որակը կբարելավվի վարչական շրջաններում

****Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 87,192 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:***

***ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ*** ***Ի.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ***

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# Ա Պ Ա Ր Ա Ն  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

### 03 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 85-Ա

### ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2023Թ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2000թ. Հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշման սահմանած կարգի 9-րդ կետի պահանջների, ,,Տեղական ինքնակառավարման մարմնի'' ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներին համապատասխան՝

*Ապարան համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել Ապարան համայնքի 2023թ հողային հաշվեկշիռը՝ համաձայն հավելված N 1- ի:
2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի ընդհանուր հողատարածքը կազմում է 57036.94 հա, որից 24797.01հա կազմում են պետական, 398.17հա՝ իրավաբանական անձանց, 19663.93հա՝ համայնքային, 12173.23հա՝ քաղաքացիների և 4,59հա՝օտարերկրյա քաղաքացիների սեփականություն հանդիսացող հողատարածքներ:
3. Համայնքի ղեկավարին՝ խիստ հսկողություն սահմանել հողերի հաշվառման, շարժի ժամանակին գրանցման, հողային կադաստրի վարման արդյունավետությունը բարձրացնելու նկատմամբ:
4. Որոշման կատարման պատասխանատվությունը դնել քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:

Ավագանի՝ (կողմ-16) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Մակարյան Վահան
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Մխիթարյան Վարդան
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ
Դավթյան Արտյոմ
Ասատրյան Արամ
Կոստանյան Ժորա

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Գ.Կարապետյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հողային ֆոնդի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների, առ 01/07/2023թ.)

Ձև N 22

| | | |
|---|---|---|
| Մարզ | Արագածոտն | 2 |
| | (անվանում) | (Կոդ) |
| Համայնք | Ապարան | 14 |
| | (անվանում) | (Կոդ) |

*(հեկտարներով)*

| NN | Նպատակային նշանակություն | Հողատեսք, գործառնական նշանակություն | Կոդի NN | Ընդամենը ∑2+3+4+8+12[a] | ՀՀ քաղաքացիների | ՀՀ իրավաբանական անձանց | Սեփականության սուբյեկտ: համայնքային: ընդամենը (5+6+7) | համայնքային: մշտական օգտագործման տրված | համայնքային: վարձակալության տրված | համայնքային: օգտագործման ու վարձակալության չտրված | պետական: ընդամենը (9+10+11) | պետական: մշտական օգտագործման տրված | պետական: վարձակալության տրված | պետական: օգտագործման ու վարձակալության չտրված | Օտար պետ-ի, ՀՀ-ում դ-ի և հ-ի ներկայացուցչությունների |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1.1 | 1. Գյուղատնտեսական | վարելահող | | 10582.05 | 8604.20 | 202.75 | 1562.43 | | 568.21 | 994.22 | 208.94 | | | 208.94 | 3.73 |
| 1.2 | | բազմ տնկարկներ, | | 10.97 | 5.07 | 5.90 | | | | | | | | | |
| 1.2.1 | | այդ թվում[a] | | 10.97 | 5.07 | 5.90 | | | | | | | | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | | | | | | | | | | | | |
| 1.2.3 | | այլ բազմամյա | | | | | | | | | | | | | |
| | | խոտհարք | | 1775.31 | 968.23 | 55.20 | 271.02 | | 17.10 | 253.92 | 480.86 | | 4.19 | 476.67 | |
| 1.4 | | արոտ | | 25883.08 | 168.77 | 41.68 | 15046.26 | | 404.72 | 14641.54 | 10626.37 | | 4713.82 | 5912.55 | |
| 1.5 | | այլ հողատեսքեր | | 8217.74 | 17.05 | 32.85 | 1763.79 | | 5.30 | 1758.49 | 6404.05 | | 4.69 | 6399.36 | |
| 1 | | Ընդամենը | | 46469.15 | 9763.32 | 338.38 | 18643.50 | 0.00 | 995.33 | 17648.17 | 17720.22 | | 4722.70 | 12997.52 | 3.73 |
| 2.1 | 2.Բնակավայրերի | բնակելի | | 2296.66 | 2285.11 | 2.61 | 8.02 | 0.19 | 0.08 | 7.75 | 0.06 | | | 0.06 | 0.86 |
| 2.1.1 | | այդ թվում[a] | | 2063.91 | 2052.42 | 2.61 | 8.02 | 0.19 | 0.08 | 7.75 | | | | | 0.86 |
| 2.1.2 | | այգեգործական (ա | | 232.69 | 232.69 | | | | | | | | | | |
| 2.2 | | հասարակական | | 99.17 | 34.39 | 10.13 | 21.74 | | 9.10 | 12.64 | 32.91 | 3.89 | | 28.28 | |
| 2.3 | | խառը | | 1.23 | 0.20 | | 1.03 | | 0.03 | 1.00 | | | | | |
| 2.4 | | ընդհանուր | | 318.76 | | | 318.14 | | | 318.14 | 0.62 | | | 0.62 | |
| 2.5 | | այլ հողեր | | 364.94 | 11.23 | | 353.71 | | 0.59 | 353.12 | | | | | |
| 2 | | Ընդամենը | | 3080.76 | 2330.93 | 12.74 | 702.64 | 0.19 | 9.80 | 692.65 | 33.59 | 3.89 | 0.00 | 28.96 | 0.86 |
| 3.1 | 3. Արդյունաբ., ընդերքօգտ. | արդյունաբերությա | | 52.08 | 18.99 | 29.75 | 3.34 | | | 3.34 | | | | | |
| 3.2 | | գյուղատնտեսական, | | 328.94 | 59.93 | 7.47 | 130.74 | 0.25 | 0.24 | 130.25 | 130.80 | | | 130.80 | |
| 3.3 | | պահեստարանների | | 1.59 | | | 1.59 | | | 1.59 | | | | | |
| 3.4 | | ընդերք | | 272.74 | | | | | | | 272.74 | | 228.34 | 44.40 | |
| 3 | | Ընդամենը | | 655.35 | 78.92 | 37.22 | 135.67 | 0.25 | 0.24 | 135.18 | 403.54 | 0.00 | 228.34 | 175.20 | |
| 4.1 | 4.Էներգետիկայի, ...տրանսպորտ... | էներգետիկայի | | 8.78 | | 7.81 | 0.97 | | | 0.97 | | | | | |
| 4.2 | | կապի | | 0.93 | 0.06 | 0.55 | 0.20 | | | 0.20 | 0.12 | | | 0.12 | |
| 4.3 | | տրանսպորտի | | 76.77 | | 0.10 | | | | | 76.67 | | | 72.90 | |
| 4.4 | | կոմունալ | | 23.19 | | 0.23 | 6.06 | | | 6.06 | 16.90 | 5.33 | 0.89 | 10.68 | |
| 4 | | Ընդամենը | | 109.67 | 0.06 | 8.69 | 7.23 | 0.00 | 0.00 | 7.23 | 93.69 | 5.33 | 0.89 | 83.70 | |
| 5.1 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | բնապահպանական | | | | | | | | | | | | | |
| 5.1.1 | | այդ թվում[a] արգելոց | | | | | | | | | | | | | |
| 5.1.2 | | | | | | | | | | | | | | | |
| 5.1.3 | | ազգային | | | | | | | | | | | | | |
| 5.2 | | առողջարարական | | | | | | | | | | | | | |
| 5.3 | | հանգստի | | 2.87 | | | 2.87 | | | 2.87 | | | | | |
| 5.4 | | պատմական և | | 205.87 | | 1.14 | 64.26 | 1.14 | | 63.12 | 140.47 | | | 140.47 | |
| 5 | | Ընդամենը | | 208.74 | | 1.14 | 67.13 | 1.14 | | 65.99 | 140.47 | | | 140.47 | |
| 6 | 6.Հատուկ նշանակության | Ընդամենը | | 6.74 | | | | | | | 6.74 | | | 6.74 | |
| 7.1 | 7. Անտառային | անտառ | | 4616.02 | | | | | | | 4616.02 | 4.65 | | 4611.37 | |
| 7.2 | | թփուտ | | 66.80 | | | | | | | 66.80 | | | 66.80 | |
| 7.3 | | վարելահող | | | | | | | | | | | | | |
| 7.4 | | խոտհարք | | 108.93 | | | | | | | 108.93 | | | 108.93 | |
| 7.5 | | արոտ | | 2.72 | | | | | | | 2.72 | | | 2.72 | |
| 7.6 | | այլ հողեր | | 554.36 | | | | | | | 554.36 | | | 554.36 | |
| 7 | | Ընդամենը | | 5348.83 | | | | | | | 5348.83 | 4.65 | | 5344.18 | |
| 8.1 | Ջրային | գետեր | | 130.90 | | | | | | | 130.90 | | 0.05 | 130.85 | |
| 8.2 | | ջրամբարներ | | 2.62 | | | 2.62 | | | 2.62 | | | | | |
| 8.3 | | լճեր | | 890.57 | | | 82.62 | | 0.15 | 82.47 | 807.95 | | | 807.95 | |
| 8.4 | | ջրանցքներ | | 131.10 | | | 21.18 | | | 21.18 | 109.92 | | | 109.92 | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8.5 | 8. | հիդրոտեխ. և | | 2.50 | | | 1.34 | | | 1.34 | 1.16 | | | 1.16 | |
| 8 | | Ընդամենը | | 1157.69 | | | 107.76 | | 0.15 | 107.61 | 1049.93 | | 0.05 | 1049.88 | |
| 9.1 | 9. Պահուստային | աղուտներ | | | | | | | | | | | | | |
| 9.2 | | ավազուտներ | | | | | | | | | | | | | |
| 9.3 | | ճահիճներ | | | | | | | | | | | | | |
| 9.4 | | | | | | | | | | | | | | | |
| 9.5 | | այլ | | | | | | | | | | | | | |
| 9 | | Ընդամենը | | | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ | | | | 57036.93 | 12173.23 | 398.17 | 19663.93 | 1.58 | 1005.52 | 18656.83 | 24797.01 | 13.87 | 4951.98 | 19826.65 | 4.59 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ի.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 03 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 86-Ա

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,002 ՀԱ ՀՈՂԱՄԱՍ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջների, համաձայն ՀՀ Հողային օրենսգրքի $48^1$-րդ հոդվածի դրույթների, ՀՀ կառավարության 12.04.2001թ N286 որոշման 46.2 կետի ա) ենթակետին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է՝*

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող Ապարան քաղաքի Մ.Բաղրամյան փողոց թիվ 16/15 հասցեում գտնվող 0.002 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը տրամադրել առանց մրցույթի՝ կառուցապատման իրավունքով:
2. Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:

Ավագանի՝ (կողմ-16) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Մակարյան Վահան
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Մխիթարյան Վարդան
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ
Դավթյան Արտյոմ
Ասատրյան Արամ
Կոստանյան Ժորա

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Գ.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 87-Ա

## ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0,00119 ՀԱ ՀՈՂԱՄԱՍ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջների, համաձայն ՀՀ Հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածի դրույթների, ՀՀ կառավարության 12.04.2001 թ N 286 որոշման 46.2 կետի ա) ենթակետին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է՝*

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող Ապարան քաղաքի Մ.Բաղրամյան փողոց թիվ 30/2 հասցեում գտնվող 0.00119 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը տրամադրել առանց մրցույթի՝ կառուցապատման իրավունքով:
2. Որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:

Ավագանի՝ (կողմ-16) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Մակարյան Վահան
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Մխիթարյան Վարդան
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ
Դավթյան Արտյոմ
Ասատրյան Արամ
Կոստանյան Ժորա

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Գ.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 03 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 88-Ա

### ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համաձայն ՀՀ կառավարության 26.05.2016թ 550-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումների վերաբերյալ համայնքի ղեկավարի դրական դիրքորոշումը.**

*Ապարան համայնքի ավագանին որոշում է՝*

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Ապարան համայնքի Ապարան քաղաքի և Ծաղկաշեն գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղիղ վաճառքով օտարել ըստ ներկայացված աղուսյակի:

2.Հաստատել հողատարածքի օտարման գինը՝ տվյալ պահին գործող կադաստրային արժեքով:

3.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա

Ավագանի՝ (կողմ-16) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Մակարյան Վահան
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Մխիթարյան Վարդան
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ
Դավթյան Արտյոմ
Ասատրյան Արամ
Կոստանյան Ժորա

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Գ.Կարապետյան

Աղյուսակ
Ապարան համայնքի ավագանու
03.08.2023թ. N88-Ա որոշման

| Լոտ | Գտնվելուվայրը | Մակերես /ՀԱ/ | Մեկնարկ-այինգինը / ՀՀդրամ | Նպատակային նշանակություն հողատեսքը |
|---|---|---|---|---|
| 1 | Գ. Ծաղկաշեն 3-րդ փողոց թիվ 8/1 | 0.04822 | 381.902 | Բնակավայրի բնակելի.կառուցապատում |
| 2 | Ք. Ապարան Մ.Բաղրամյան փողոց թիվ 32/9 | 0.00025 | 4.694 | Բնակավայրերի հասարակական կառուցապատում |
| 3 | Ք. Ապարան Մ.Բաղրամյան փողոց թիվ 32/10 | 0.00038 | 7.135 | Բնակավայրերի հասարակական կառուցապատում |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ի.Ա.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am


## ՈՐՈՇՈՒՄ

### 03 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 89-Ա

### ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և ՀՀ Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի դրույթներով, համաձայն ՀՀ Կառավարության 04.06.2020թ N 1023 որոշման պահանջների, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքի դրույթներին համապատասխան, հիմք ընդունելով քաղաքացիների կողմից պահանջարկի ուղղությամբ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է՝*

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի սեփականություն համարվող 5,61047հա հողամասերը՝ 12 լոտ, օտարելու աճուրդ-վաճառքի միջոցով և հաստատել հողամասերի օտարման մեկնարկային գները՝ համաձայն աղյուսակի:
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր աճուրդ-վաճառքը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

Ավագանի՝ (կողմ-16) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Մակարյան Վահան
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Մխիթարյան Վարդան
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ
Դավթյան Արտյոմ
Ասատրյան Արամ
Կոստանյան Ժորա

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Գ.Կարապետյան

Աղյուսակ
Ապարան համայնքի ավագանու
03.08.2023թ. N89-Ա որոշման

| Հ Ո Տ | Գտնվելու վայրը | Ծածկագիր | Մակերես/Հ Ա/ | Մեկնարկ-ային գինը / ՀՀդրամ | Նպատակային նշանակություն հողատեսքը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գ. Լուսագյուղ 1-ին փողոց թիվ 53/1 | 0023-0011 | 0,08 | 400.000 | Բնակավայրի բնակելի. կառուցապատում |
| 2 | Գ. Երնջատափ 16-րդ փողոց թիվ 5 | 0042-0026 | 0,0032 | 120.000 | Բնակավայրի բնակելի. կառուցապատում |
| 3 | Ք. Ապարան Մ.Բաղրամյան փողոց 4-րդ փակուղի թիվ 2/1 | 0058-0188 | 0,00558 | 280.000 | Բնակավայրերի հասարակական .կառուցապատում |
| 4 | Ք. Ապարան Գ.Ժդեհի փոող թիվ 32/1 | 0036-0068 | 0,00645 | 200.000 | Բնակավայրերի հասարակական .կառուցապատում |
| 5 | Գ.Քուչակ 13-րդ փողոց թիվ 1/2 | 0068-0011 | 0,04536 | 600.000 | Բնակավայրերի հասարակական .կառուցապատում |
| 6 | Գ.Թթուջուր Ա.Մանուկյան փողոց թիվ 3 | 0021-0006 | 0,05589 | 110.000 | Բնակավայրի բնակելի. կառուցապատում |
| 7 | Ք.Ապարան Մ.Բաղրամյան փողոց թիվ 32/11 | 0104-0040 | 0,0084 | 170.000 | Բնակավայրերի հասարակական .կառուցապատում |
| 8 | Գ. Եղիպատրուշ 1-ին փողոց թիվ 2/2 | 0055-0032 | 0,0067 | 150.000 | Բնակավայրի բնակելի. կառուցապատում |
| 9 | Գ.Թթուջուր անտառային փողոց թիվ 2 | 0027-0015 | 0,03408 | 250.000 | Բնակավայրի բնակելի. կառուցապատում |
| 10 | Ք. Ապարան Մ.Բաղրամյան փողոց թիվ 18/6 | 0058-0187 | 0,00352 | 80.000 | Բնակավայրերի հասարակական կառուցապատում |
| 11 | Ք. Ապարան Մ.Բաղրամյան փողոց թիվ 66/3 | 0138-0111 | 0,2 | 1.800.000 | Բնակավայրերի հասարակական կառուցապատում |
| 12 | Ք.Ապարան Սարիթաղ թաղամասի 4-րդ փողոց թիվ 32/2 | 0005-0043 | 0,08 | 560.000 | Բնակավայրի բնակելի.կառուցապատում |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ի.Ա.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## 03 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 90-Ա

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱԳՅՈՒՂ ԵՎ ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթներով, համաձայն՝ Ապարան համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին Ապարան համայնքի ավագանու 16.02.2023թ. N 19-Ա որոշման պահանջների.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է՝*

1.Հավանություն տալ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի գործառնական նշանակությունները փոխելուն՝ համաձայն աղյուսակի :
2. Ընդունել ի գիտություն, որ հողամասերի գործառնական նշանակությունները փոփոխվում են դրանք օտարելու նպատակով:
3.Որոշման կատարման պատասխանատվությունը դնել քաղաքաշինության հողաշինության բաժնի վրա:

Ավագանի՝ (կողմ-16) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Մակարյան Վահան
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Մխիթարյան Վարդան
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ
Դավթյան Արտյոմ
Ասատրյան Արամ
Կոստանյան Ժորա

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Գ.Կարապետյան

Աղյուսակ 1
Ապարան համայնքի ավագանու
03.08.2023թ. N90-Ա որոշման

| N | ծածկագիրը | Մակերես /հա | առկա գործառնական նշանակությունը | գործառնական նշանակությունը ըստ բնակավայրի գոտևորման հատակագծի | Փոփոխվող գործառնական նշանակությունը | ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 02-051-0029-0007-հց | 0.056 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի բնակելի կառուցապատման | Օտարելու նպատակով |
| 2 | 02-040-0055-0013 | 0.03676 | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի այլ | Բնակավայրերի բնակելի կառուցապատման | Օտարելու նպատակով |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ի.Ա.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

# ՈՐՈՇՈՒՄ

## 03 ՕԳՈՍՏՈՍԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 91-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 14.01.2010թ. N 16-Ն որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով ներդրումային ծրագիրը.

*Ապարան համայնքի ավագանին որոշում է՝*

1. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Ապարան համայնքի Սարալանջ գյուղի վարչական տարածքում գտնվող 02-096-0139-0004 կադաստրային ծածկագրով 4.35789 հա պետական սեփականություն հանդիսացող հողամասը օտարել և ապահովել օրենքով սահմանված կարգը:
2.Համայնքի ղեկավարին՝ համաձայնություն ստանալուց հետո ապահովել աճուրդի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր աճուրդ-վաճառքը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

Ավագանի՝ (կողմ-16) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Կարապետյան Կարեն
Մակարյան Վահան
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Մխիթարյան Վարդան
Սաֆարյան Սևակ
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ
Դավթյան Արտյոմ
Ասատրյան Արամ
Կոստանյան Ժորա

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ա.Գ.Կարապետյան